

ՀՐԱԶՅԱ ՔԱՄՐԱԶՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (AIEA)13-րդ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Սիրելի բարեկամներ

Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությունը տասնամյակների ուղի է անցել: Այն իր տարեգրության մեջ արձանագրել է մեծ ձեռքբերումներ և զգալի առաջընթաց հայագիտության զարգացման գործում և՛ խորքային, և՛ տարածական իմաստով, հատկապես հայագիտության միջազգայնացման առումով: Այն 33 տարվա պատմություն ունի և իր մեջ ներառում է 400-ից ավելի անդամներ:

Ընկերակցությունը նպաստել է Հայաստանի և արտերկրի հայազետների տեղական շփումների, գիտական կապերի սերտացմանը՝ էական դեր կատարելով հայազետների նոր սերունդների կայացման գործում, որ մենք հատկապես կարևորում ենք: Այս ընթացքը, հուսով ենք, շարունակական է լինելու, և մեր ցանկությունն է Մատենադարանի նոր սերունդներին ևս ընդգրկելու գրանույն: Նման համաժողովները, մեր համոզմամբ, ի շարս այդ խնդիրների՝ կապված տեղեկատվության փոխանակման, մարդկային շփումների և զարգացման ծրագրերի հետ, պետք է առաջ քաշեն նաև հրատարակչական ծրագրեր՝ նպատակ ունենալով գիտական-թարգմանական ավանդույթի ձևավորման, եզրաբանություն հարստացման. դրանց պետք է նպաստեն այդ առթիվ լույս տեսնող ոչ միայն ելույթների թեզիսները, այլև առանձին մենագրությունները, հոդվածների ժողովածուները, ուր բոլոր հոդվածները, ցանկալի է, որ ունենան իրենց հայերեն տարբերակները, քանի որ հայագիտությունը առաջին հերթին հայերենագիտություն է, և նման նախաձեռնությունը՝ իբրև գործունեության ծրագիր, միտված է զարգացնելու այն և՛ նոր տեսություններով ու մեթոդաբանությունով մեծացնելով նրա ասոցիատիվ դաշտն ու թափանցելիությունը այլ համակարգերում:

Այս համաժողովը, կարծում եմ, կունենա հայագիտության համար և՛ կենտրոնաձիգ, և՛ տարածական ուժ հատկապես միջազգայնացման առումով: Այս համատեքստում մենք լիահույս ենք, որ Ընկերակցության բոլոր 400-ից ավելի անդամները կդառնան իսկական մատենադարանցիներ և պարբերաբար կմասնակցեն մեր միջոցառումներին՝ միաժամանակ Մատենադարանի կաշքի միջոցով ակտիվորեն օգտվելով մեր հարստագույն հավաքածուներից, որոնք արագորեն թվայնացվում են և ներգրվում համացանցային կայքում: Մեր ցան-

կուլթյունն է, և մենք դա կքննարկենք համատեղ, Մատենադարանի կայքում Ընկերակցությանը նվիրված հատուկ կայքէջ բացել: Մեր ցանկությունն է նաև նրա շարքերը համալրել Մատենադարանի նոր սերունդների ներկայացուցիչներով, որոնք արդեն կարևոր քայլեր են արել հայագիտության բնագավառում:

Ես ցանկանում եմ խոսել նաև հայագիտության այն կենտրոնաձիգ ուժի մասին, որ միացնում է, օղակում է մեզ բոլորիս: Մեր խնդիրն է պահպանել և զորացնել այն: Սակայն հաճախ, մեզնից անկախ, գոյանում է մերձգիտական մի տարածք, որ ոչ միայն զուրկ է այդ կենտրոնաձիգ ուժից, այլև չունի դրա ազդու գիտակցությունն անգամ:

Մի տեսակ մակաբույժի շրջիկ կերպար կարող է ստեղծվել, այն է՝ հայագետ՝ առանց հայերենի դուզել ինչ իմացության, միջնորդավորված, սնուցված միայն համացանցային տեղեկատվությամբ: Փառք Աստծո, դրա վտանգը առաջժամ չկա, բայց կան մանրատման, տրոհման տենդենցներ, միտումներ, շատերը չեն շփվել դասական հայագիտության հետ, չեն օգտվում բնագրերից, ձեռագրաց մայր ցուցակներից ու մատենաշարերից:

Մասնավորաբար, շեշտել եմ ցանկանում Մատենադարանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» և «Մատենագիրք հայոց» մատենաշարերը, որոնք ընդգրկվելու են համապատասխանաբար 35 և 70 հատորների մեջ: Դրանք օգնում են ոչ միայն մեր ձեռագրական-մատենագրական ժառանգության ամբողջացման, այլ նոր բնագրերի հայտ բերելու և գիտական շրջանառության մեջ դնելու գործին: Մենք ներմուծել և ներմուծում ենք դրանք Մատենադարանի կայքէջում որոնման ծրագրերով, իսկ սրանք հիմնարար են հայագիտության համար:

Վերջերս տպագրված և նախորդ հատորները, որոնք ցուցադրված են այսօր, գիտաժողովի մասնակիցները կարող են ստանալ Մատենադարանի գրադարանից:

Ի դեպ, այսօր նաև գրքերի յուրահատուկ շնորհանգեսի օր է, գրքեր, որ լույս են տեսել Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության 13-րդ համաժողովի հրատարակչական ծրագրերի շրջանակներում: Դրանցից նշենք.

Ընկերակցության առաջին նախագահ, վաստակաշատ Մայքլ Սթոունի «Պարականոն բնագրեր և ավանդություններ» գիրքը, որի ընծայագիրը ցանկանում եմ կարդալ. «Նվիրվում է Մաշտոցի անվան Մատենադարանին, որը նպաստում է հայագիտության զարգացմանը ողջ աշխարհում» (Մայքլ Սթոուն):

«Մատենագիրք հայոց»-ի հերթական 2 հատորները,

«Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ի 2 հատորները,

Գոհար Մուրադյանի «Հին հունական առասպելները հայ մատենագրության մեջ»,

Հրայա Թամրազյանի «Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը»,

Հ. Հակոբյանի «Արցախի մանրանկարչությունը» եռալեզու պատկերազրույցը,

Վիզեն Դազարյանի Գիտնխոս Արեոպագոցու երկերի աշխարհաբար թարգմանությունը,

Լևոն Ավդոյանի «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ»,

Արմենուհի Աբգարյանի «Գրչարվեստ և պատկերների հմայք» գիրքը,

Վարդի Քեշիշյանի աշխատասիրությունամբ Արշակ Ալպոյաճյանի «Տպագրութեան արուեստը եւ Հայք» անտիպ երկը,

Համաժողովի թեզիսների ժողովածուն և այլ հրատարակություններ և գրքեր, որոնք լույս են տեսել Մատենադարանի միջոցներով և պետական պատվերով:

Սիրելի բարեկամներ,

Մատենադարանում վերջին տարիներին բուռն սերնդափոխություն է ընթանում, և մենք դրա մեջ ենք տեսնում հայագիտության զարգացման հեռանկարը:

Մեր բարեկամ հայագետների մեծ մասը տեղյակ է Մատենադարանի վերջին տարիների նորակերտմանը, որը մեր նորանկախ հանրապետության զիտամշակութային խոշորագույն ձեռքբերումներից է:

Կարծում եմ՝ հենց դրա շնորհիվ է, որ ընկերակցության 13-րդ գիտաժողովը հրավիրվեց Մատենադարանում: Որոշումը կայացավ ընկերակցության Բուզապեշտի համաժողովում և ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Համաժողովի բոլոր մասնակիցները հնարավորություն կունենան մանրամասնորեն ծանոթանալու Մատենադարանի նորակերտված ամբողջական համալիրին, որը համապատասխանում է միջազգային բարձրագույն չափանիշներին:

Մատենադարանը ստեղծագործական եռուզեռի, ներքին շարժման, կառուցվածքային փոփոխությունների ընթացքում է: Եկող տարի Արցախում, Գանձասար վանական համալիրում հանդիսավորապես կբացվի «Մաշտոցի անվան Մատենադարան-Գանձասար» զիտամշակութային կենտրոնը՝ իբրև Մատենադարանի մասնաճյուղ: Այն կունենա իր գիտական և ցուցադրական մասը: Մոտ 5 տարի նախապատրաստում ենք ցուցանմուշները թանգարանային մասի համար, ուր ընդգրկված են ոչ միայն Արցախի գրչության կենտրոնները, այլ ողջ պատմական Հայաստանի տարածքում ստեղծված ձեռագրերի բարձրարվեստ ընդօրինակությունները: Մատենադարանում արդեն իսկ գործում է Արցախի մանրանկարչության ցուցասրահը, որ մշտապես այցելուների ուշադրության կենտրոնում է: Այն գիտել են հարյուր հազարավոր մարդիկ: Ցուցադրությունը հագեցած կլինի նաև Արցախ աշխարհին վերաբերող եզակի վավերագրերով և արխիվային փաստաթղթերով:

Հուրախություն մեզ, արդեն ընթացքի մեջ են շինարարական աշխատանքները և ցանկացողները, դեպի Արցախ մշակութային-ճանաչողական մեր այցի շրջանակներում, ականատես կլինեն այդ ընթացքին: Մրադիրը հովանավորում

է Մատենադարանի խոշոր նվիրատուներից՝ «Փյունիկ» համահայկական բարեգործական հիմնադրամը, ի դեմս համանախագահներ Գաբրիել Զեմպերճյանի և Լևոն Սարգսյանի: Մեր կարծիքով, սա պատմամշակութային խոշոր ծրագիր է, և համալիրի բացումը Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին՝ իբրև քաղաքական-մշակութային վերելքի, իբրև համաժողովրդական արարման ու զարթոնքի գորեզ փաստ՝ կհանրահռչակվի ի լուր աշխարհի:

Սիրելի բարեկամներ,

Ես ցանկանում եմ հատուկ անդրադառնալ այս համաժողովի կայացման աշակիցներին և հովանավորներին. գլխավոր աշակիցն է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը:

Հովանավորներից են՝

Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը,

Գալուստ Կյուլպենկյան հաստատությունը, որոնց մշտական աջակցությամբ և հոգածությամբ Մատենադարանը լայնածավալ ծրագրեր է իրագործում,

«Ձեչ Թի Ինթերնեյշնլ Կուրսեմբուրգ Էս-Էչ» ընկերության հայաստանյան ներկայացուցչությունը:

Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց այս պատմական համաժողովի կայացմանն աջակցելու առթիվ:

Սիրելի բարեկամներ, լինել հայագետ նշանակում է շփվել մեծ կենսադաշտի, հազարամյակների պատմության և մշակույթի հետ ու նաև հոգևոր գերզգայուն մի աշխարհի, ուր մտնողը չի կարող նվիրյալ չդառնալ, ինչ-որ չափով չլինել խենթ: Ուրեմն այդ սուրբ խենթությունը թող մեզ հետ լինի մեր ողջ կյանքի ընթացքում, զի «եղբայր եմք մեք»՝ միացած լինելության այս օղակով, որ կոչվում է հայագիտություն:

Բարի երթ մեր պատմական համաժողովին: